ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4864-Ա « 02 » դեկտեմբերի 2025թ.

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 59-րդ հոդվածով և 84-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի տնօրենի 13.11.2025թ. հ.1190 գրությունը և «Բիդ ապրանքա-հումքային բորսա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 19.09.2025թ. տրված Թիվ 10092025/1 գնահատման հաշվետվությունը.

1. Երևանի ենթակայության «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն)՝ Ընկերության հաշվեկշռում հաշվառված, սույն որոշման հավելվածում ընգրկված ավտոմեքենաների օտարման գները սահմանել «Բիդ ապրանքա-հումքային բորսա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից գնահատված շուկայական արժեքները:

2. Հանձնարարել Ընկերության տնօրենին՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունում կատարել օտարված տրանսպորտային միջոցներին վերաբերող համապատասխան փաստաթղթերի ձևակերպումները:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետի և Ընկերության տնօրենի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Ս.Մադաթյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
02.12. 2025թ.
հ. _____4864_____ -Ա որոշման

ՑԱՆԿ
«ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ

ՀՀ դրամ

ՀՀ	Անվանումը	պետհամարանիշը	Քանակ	Մեկնարկային գները
1	MERCEDES-BENZ SPRINTER 318 CDI 3.0D	496 CA 61	1	2,561,000
2	MERCEDES-BENZ SPRINTER 318 CDI 3.0D	497 CA 61	1	2,040,000
3	MERCEDES-BENZ SPRINTER 318 CDI 3.0D	498 CA 61	1	1,953,000
4	MERCEDES-BENZ SPRINTER 318 CDI 3.0D	499 CA 61	1	2,952,000
Ընդամենը՝			**4**	**9,506,000**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**